## ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Հեռ.՝ (374 10) 510910, 8686

Ֆաքս՝(374 10) 538904

E-mail: bank@aeb.am

**Էական փաստերը և տեղեկությունները ներառող հաշվետվություն թիվ 23, 26 հունիսի 2017թ.**

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)

արժեթղթերի քանակը՝ 1,852,533

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 2,500 ՀՀ դրամ

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Արտակ Առաքելյան | Գործադիր տնօրենի տեղակալ-գանձապետ | | 26.06.2017թ. |
| Օնիկ Չիչյան | Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ | | 26.06.2017թ. |
| Ռուբեն Բաղալյան | Գործառնական գծով տնօրենի տեղակալ | | 26.06.2017թ. |
| Աստղիկ Մանրիկյան | Միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ | | 26.06.2017թ. |
| Արփինե Փիլոյան | Տեխնոլոգիաների և անվտանգության գծով տնօրենի տեղակալ | | 26.06.2017թ. |
| Դավիթ Ազատյան | Գլխավոր հաշվապահ | | 26.06.2017թ. |
| Հայկ Ավետիսյան | Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ | | 26.06.2017թ. |
| Վրեժ Քիանգիրյան | Իրավաբանական վարչության պետ | | 26.06.2017թ. |
| Վարդան Սարգսյան | Վարկավորման վարչության պետ | | 26.06.2017թ. |
| Արամայիս Գալստյան | Գործադիր տնօրեն | | 26.06.2017թ. |

Կ.Տ.

Սույն թվականի հունիսի 23-ին ժ.12:00-ին՝ «Ալբերտ Հոլ» դահլիճում /ք.Երևան, Նար-Դոսի 2/ կայացավ Բանկի տարեկան ժողովը: Ժողովի մասնակիցների գրանցումը կատարվեց ժ.11:30-ից-12:00:

Բանկի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է առ 2017թ. մայիսի 17-ը, ըստ բաժնետերերի ռեեստրի տվյալների:

Տարեկան ժողովի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

Օրակարգ

1. Բանկի բաժնետերերի տարեկան ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:

2. Բանկի Վարչության հաշվետվությունը 2016թ. տարեկան գործունեության մասին:

3. Բանկի 2016թ. տարեկան արդյունքներով շահաբաժիններ վճարելու մասին:

4.Բանկի 2016թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթի բաշխման համամասնությունները հաստատելու մասին:

5.Բանկի աուդիտն իրականացնող անձի հաստատման մասին:

6. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության փոփոխված տարբերակի վերաբերյալ:

7. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի ընտրության մասին:

1) **Շահութաբաժինների վճարման վերաբերյալ.**

23.06.2017թ. տարեկան ժողովը որոշեց 2016թ. արդյունքներով բանկի բաժնետերերին վճարել շահաբաժիններ՝ մեկ բաժնետոմսին 200 ՀՀ դրամ հաշվարկով, ինչը կազմում է մեկ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ տարեկան 8% եկամտաբերություն՝ վճարումը սկսելով ս.թ. հուլիսի 24-ից, բանկի Խորրհրդի հաստատած կարգով:

2) **Բանկի կառավարման մարմինների անդամների փոփոխության վերաբերյալ տեղեկություններ.**

Տեղեկություններ թողարկողի ղեկավար պաշտոնյաների մասին.

| Պաշտոնը | Ա. Ա. Հ. | Վերջին երեք տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները |
|---|---|---|
| Բանկի խորհրդի նախագահ | Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի, ծնված 1965թ., ինժեներ-տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու, Քաղաքացիությունը՝ ՀՀ, | 1998թ. առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի նախագահ: |
| Բանկի խորհրդի անդամներ | Նալջյան Արմեն Տիգրանի, ծնված 1967թ., տնտեսագետ Քաղաքացիությունը՝ ՀՀ | 05.10.2010թ.-11.08.2016թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործադիր տնօրեն: 11.08.2016թ.-ից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի նախագահի տեղակալ |

| | | |
|---|---|---|
| | Մելիքյան Արամ Ռոբերտի<br>ծնված 1963թ.,<br>տնտեսագետ,<br>Քաղաքացիությունը՝ ՀՀ, | 01.08.2012թ.-11.08.2016թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի նախագահի տեղակալ<br>11.08.2016թ.-ից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ |
| | Իննա Յաբբարովա,<br>ծնված 1965թ.,<br>տնտեսագետ | 2014թ. հունիսից առ այսօր՝ Կառավարության հետ հարաբերությունների ավագ խորհրդատու, փոխտնօրեն, ՎԶԵԲ<br>2013թ. հունիսից առ այսօր՝ Թաթարստանի Սպուրտ բանկում Խորհրդի անդամ, ՎԶԵԲ ներկայացուցիչ<br>2006թ. հունվարից առ այսօր՝ Բելառուսի Ալիվարիա (Կարլսբերգ խումբ) գարեջրի գործարանի Խորհրդի անդամ, ՎԶԵԲ ներկայացուցիչ<br>2007թ.-ի հուլիս – 2014թ. հունիս՝ ՎԶԵԲ, ՌԴ, Մոսկվա, Գլխավոր բանկիր, Ֆինանսական հաստատությունների ՌԴ-ի թիմ<br>2007թ.-ի հունվար – 2007թ.-ի հունիս՝ ՎԶԵԲ, Գլխավոր գրասենյակ, Ռիսկերի կառավարում<br>07.03.2016թ. առ այսօր՝ ,ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԵ ԲԲԸ խորհրդի անդամ: |
| | Պետրոսյան Լուիզա Աշոտի,<br>ծնված 1982թ.,<br>տնտեսագետ-մաթեմատիկոս,<br>Քաղաքացիությունը՝ ՀՀ, | 14.06.2013թ առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ, Խորհրդի Քարտուղար: |
| | Հայրապետյան Ռուբեն Աշոտի,<br>ծնված 1980թ.,<br>տնտեսագետ<br>Քաղաքացիությունը՝ ՀՀ | 24.05.2013-22.05.2014թ.թ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործադիր տնօրենի տեղակալ<br>23.05.2014-29.06.2014թ.թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործադիր տնօրենի խորհրդական<br>30.06.2014թ առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ: |

Բանկի խորհրդի անդամները ընտրված են 23.06.17թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից:

Խորհրդի նախագահը, տեղակալը և քարտուղարը ընտրվել են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ 23.06.17թ.-ին կայացած խորհրդի նիստում: